

ՀԱՂՈՐԴԱԳԱԿԱՆ ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Լ. Ն. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կայուն կապակցությունները վերաիմաստավորված կամ ոչ փոխաբերական նշանակություն արտահայտող պատրաստի վերարտադրելի լեզվական միավորներ են: Ընդհանուր առմամբ կայուն կապակցություններն իրենց շարահյուսական կառուցվածքով համապատասխանում են կա՛մ բառակապակցություններին, կա՛մ նախադասություններին, այսինքն՝ ունեն կա՛մ անվանողական, կա՛մ հաղորդակցական արժեք:

Հաղորդակցական կայուն կապակցությունները խոսողի կողմից պատրաստի կերպով վերարտադրվում են որպես խոսքի ամբողջական հատվածներ⁴⁶: Նման կապակցությունների ամենակարևոր առանձնահատկություններն են ստորոգումը, հնչերանգը և մտքի ավարտվածությունը: Էական նշանակություն ունեն նաև եղանակավորությունը և բաղադրիչների շարադասությունը:

Խնդրո առարկա կապակցությունները կարելի է քննել ըստ կառուցվածքային-քերականական առանձնահատկությունների և ըստ իմաստային դիտվածքի:

Ներկա հոդվածում իմաստաբանության հայեցակետից քննության են առնվում հաղորդակցական կապակցությունները գրաբարի մակարդակում համաժամանակյա կտրվածքով, կատարվում է դրանց իմաստային (թեմատիկ) դասակարգում: Ըստ որում, մեր ուսումնասիրության ծիրի մեջ են առնված ոչ միայն գրաբարյան մասնակի վերաիմաստավորում ունեցող կամ միաբևեռ և ամբողջական նոր իմաստավորմամբ օժտված կամ իդիոմատիկ հաղորդակցական կապակցությունները⁴⁷, այլև առած-ասացվածքները, թևավոր խոսքերն ու մաղթանքները⁴⁸: Այս

⁴⁶ Հաղորդակցական կայուն կապակցությունների մասին տե՛ս Պ. Ս. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., 1973, էջ 180-184: Խ. Գ. Բադիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986, էջ 292-322: Ա. Ս. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1990, էջ 309-328: А. Г. Назарян, Фразеология современного французского языка, М., 1987, էջ 204-208:

⁴⁷ Միակողմ կամ միաբևեռ վերաիմաստավորում ունեցող և իդիոմատիկ արտահայտությունների մասին տե՛ս Խ. Գ. Բադիրյան, նշվ. աշխ., էջ 81: Л. П. Смит, Фразеология английского языка, М., 1959, էջ 162: А. Г. Назарян, նշվ. աշխ., էջ 64:

⁴⁸ Տե՛ս Ա. Ս. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1999, էջ 304: Հ. Ղազարյան, Գունանիշ բաղադրիչով դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում, Ե., 2004, էջ 113: В. Л. Архангельский, Устойчивые фразы в современном русском языке,

առումով հիմք ենք ընդունել այն հանգամանքը, որ հաղորդակցական կայուն կապակցությունների մի մասը կազմվել է ժողովրդական մտածողության, հատկապես առած-ասացվածքների հիման վրա:

Առանձնակի ուշադրություն ենք դարձրել քրիստոնեական ոլորտին առնչվող հաղորդակցական կայուն կապակցություններին, որոնք, անշուշտ, հին հայերենում զգալի տեսակարար կշիռ ունեն:

Կարելի է կատարել նման միավորների իմաստային դասակարգում: Ըստ որում, այդօրինակ կապակցությունները ձևավորում են մի շարք իմաստային (թեմատիկ) խմբեր, որոնց էլ անդրադառնում ենք ստորև:

1. *Կրոնին՝ քրիստոնեական վարդապետությանն առնչվող կայուն կապակցություններ:* Դրանք կարելի է ենթարկել իմաստային ներքին խմբավորման՝ ըստ հետևյալ ենթախմբերի:

ա) *Աստծու և աստվածային հավաքի փառաբանություն, ինչպես նաև վերջիններիս մասին տարաբնույթ դատողություններ:* Օրինակ՝ *Այս լինէր վասն օգնականութեան բարձրելոյն* (ԱԲ, 124) = *Այս բանը լինում էր Աստծու օգնությամբ: Քեզ փա՛ռք յամենայնի* (Ն. տ., 278) = *Փա՛ռք քեզ: Ամենայն աշխարհութիւնք վարձապրութեամբ են յԱստուծոյ* (Ն. տ., 288) = *Ամեն աշխատանք վարձատրվում է Աստծուց: Աստուծոյ բարբառ է և ոչ մարդոյ* (Ն. տ., 321) = *Աստծու խոսք է և ոչ մարդու: Բանք Տեռան են բանք սուրբ* (Ն. տ., 322) = *Տիրոջ խոսքերը սուրբ են: Բանք Տեռան որպէս զարծաթ ընտրեալ և փորձեալ յերկրէ* (Փարպ., 34) = *Աստծո խոսքերն ընտիր և փորձված արծաթ են: Օրհնեցի՛ց զՏէր յամենայն ժամ* (Եղ., 177) = *Պիտի օրհնեն Տիրոջն ամենայն ժամ:*

բ) *Բարոյախոսություն, պարգամներ, ուսուցողական խրատներ:* Օրինակ՝ *Ընկալարո՛ւք զգիտութիւն քան զոսկի ընտիր* (ԱԲ, 120) = *Ընտիր ոսկուց ավելի գիտությունն ընդունեք: Թէ՛ ունիցիք հաւաքս որչափ զհապն մանանխոյ* (Ն. տ., 121) = *Եթե մանանեխի հատի չափ հավատ ունենաք: Մնա՛ ոչ զանցաւոր կեանս, այլ զյաւրեանականն* (Ն. տ., 284) = *Ապրի՛ր ոչ թե անցավոր, այլ հավիտենական կյանքով: Օրհնեցե՛ք բանս քաղցունս* (Ն. տ., 332) = *Օրհնեցե՛ք քաղցր խոսքերը: Մարդկաբար զկեանս ընտրեցե՛ք քան զմահ* (Փարպ., 98): *Մարդուն վայել կերպով կյանքը նախընտրե՛ք մահից: Որչափ ի մեծութիւն հասանիցես, ի խոնարհութեան կալի՛ր զանձն* (Եզն., 224) = *Որքան բարձրանաս, այնքան խոնա՛րի եղիր: Սիրեսցես զընկերն քո իբրեւ զանձն քո* (Ն. տ., 277) = *Սիրի՛ր ընկերոջդ ինչպես քո անձը: Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ*

Ростов-на-Дону, 1964, էջ 154-155, А. И. Смирницкий, Лексикология английского языка, М., 1956, էջ 16:

(Մարկ., Դ) = Ով ականջ ունի լսելու, թող լսի (Ով հավատում է, թող ապավինի Աստծուն): *Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զքանս հանճարոյ* (Առակ., Ա) + *Ճանաչել իմաստությունը և խրատը, իմանալ հանճարի խոսքերը: Լո՛ւր, որդեակ, խրատու հոր քո, եւ մի՛ մերժեր զօրենս մօր քո, զի պսակ շնորհաց ընկալցի զլուիս քո, եւ մանեակ ոսկի ի պարանոցի քում* (ն. տ.) = Լսի՛ր, որդի՛ս, քո հոր խրատը և մի՛ մերժիր քո մոր հրահանգը, որովհետև դրանք շնորհքի պսակ են քո գլխին և ոսկե մանյակ քո պարանոցին: *Յականջս անզգամի ամենեւին մի՛ խօսի՛ր, զի մի՛ անգոսնեսցէ զիմաստուն քանս քո* (Առակ., ԻԳ) = Անօրենի ականջին ամենևին մի՛ խոսիր, որպեսզի քո խոսքերի իմաստությունը չանարգվի⁴⁹: *Մի՛ խնայեր խրատել զողայ. զի թէ հարկանես զգաւազանաւ, ոչ մեռանի* (ն. տ.) = Մի՛ ափսոսիր խրատել երեխային, որովհետև եթե գավազանով էլ զարկես նրան, չի մեռնի⁵⁰: *Մի՛ լինիր վկայ սուր՝ ընկերի քում, եւ մի՛ խաբիր շրթամբք քովք* (Առակ., ԻԴ) = Ընկերոջդ սուտ վկա մի՛ եղիր և մի՛ խաբիր քո շուրթերով: *Եղերո՛ւք միամիտք իբրև զաղանիս* (Ագաթ., 307) = Աղավինների նման անմեղ եղեք:

գ) *Խոհափիլիսոփայություն. իմաստության տեղն ու դերը մարդու կյանքում*: Օրինակ՝ *Մարդիկ սիրեցին զխաւար առաւել քան զլոյս* (Ագաթ., 226) = Մարդիկ լույսից ավելի խավարը սիրեցին (հավատի և անհավատության մասին): *Մարդ ըստ պատկերի Աստուծոյ արարաւ* (ն. տ., 257) = Մարդն ստեղծվեց Աստծո պատկերով: *Լաւ է յստակ խորհրդով ննջել քան պիղծ խորհրդով աղօթս մատուցանել* (Եզն., 299) = Լավ է մաքուր մտադրությամբ ննջել, քան պիղծ մտադրությամբ աղոթել: *Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն, յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ* (Եղ., II յեղ.) = Ում հոգիները թուլացած են երկնավոր առաքինությունից, սաստիկ երկյուղած է և մարմնի բնությունը: *Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է* (ն. տ., II յեղ.) = Չգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն (գաղափարի՝ հավատի համար զոհվելու մասին): *Կոյր զրկի ի ճառագայից արեգական, եւ տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց* (ն. տ.) = Կոյրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգետը՝ կատարյալ կյանքից (հավատի՝ իմաստության՝ անմահության մասին):

⁴⁹ Հմմտ. *Մի՛ արկանիցեք զմարգարիտս ձեր առաջի խոզաց* հոմանշային կայուն կապակցությունը:

⁵⁰ Հմմտ. *Ապրակով սնված տղան մորը կուրախացնի* արդի հայերենյան կայուն կապակցությունը:

Լաւ է կոյր աջօք, քան կոյր մտօք (Ն. տ.) = Լավ է աչքով կոյր լինել, քան մտքով կոյր (իմաստության մասին): Թագաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն արօռակից իւր, ոչ կարէ ի վիճակին իւրում վայելուչ գոլ (Ն. տ.) = Թագավորը եթէ իմաստուն չէ, չի կարող իր վիճակի մեջ վայելուչ լինել⁵¹: Երկիր՝ թերահաւատութեան է նշանակ (Ն. տ., V յեղ.) = Վախը թերահավատության նշան է: Իմաստութիւն յելս ճանապարհաց գովի (Առակ., Ա.) = Իմաստությունն աղաղակում է դրսում: Լաւ է իմաստուն, քան հզօր, եւ հանճարեղ, քան զայն, որ ունիցի դաստակերտս մեծամեծս (Առակ., ԻԴ – Իմաստունը լավ է հզօր մարդուց, և խոհեմ մարդը՝ բազում դաստակերտներ ունեցողից):

դ) Դատողություններ Աստուծո արդար դատաստանի մասին: Օրինակ՝ Հատուցէ մարդոց ըստ իւրաքանչիւր գործոց նոցա (ԱԲ, 497) = Հատուցելու է բոլոր մարդկանց համաձայն իրենց գործերի: Ըստ գործոց մեղաց մերոց հատուցանէ մեզ Տէր (Բուգ., 165) = Տերը հատուցելու է մեզ ըստ մեր մեղքերի):

2. Անձի հոգևոր հատկանիշներին⁵², հոգեբանական վիճակներին վերաբերող կայուն կապակցություններ: Իմաստային այս խմբին պատկանող հաղորդակցական ԿԿ-ները ևս կարելի է ենթարկել ներքին խմբավորման՝ ըստ այդմ տարբերակելով թեմատիկ հետևյալ ենթախմբերը.

ա) Դատողություններ անձի մտավոր-հոգևոր հատկանիշների մասին, վերջիններիս (դրական կամ բացասական) գնահատական: Օրինակ՝ Անկարօք գոլով ըստ բնական պիտոյից, սակայն ի պէտս փառացն անհազ են (ԱԲ, 261) = Թեպետև զուրկ չեն բնական բարիքներից, սակայն փառքի հարցում անհազ են: Պարտ է արդարոյն լինել մարդասէր (Ն. տ., 276) = Արդարը պետք է մարդասեր լինի: Կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալ է (Ն. տ., 607) = Սխալ է կոյրի կողմից կոյրին առաջնորդելը (անտեղյակության՝ տգիտության մասին): Աշակերտք հեղգք առ ուսումն և փոյթք առ ի վարդապետել (Խոր., 364) = Աշակերտներն ուսման մեջ՝ ծույլ, իսկ ուսուցանելու մեջ՝ փութաջան: Անգործ մեղու լաւ է, քան զժիր պիծակ (Եզն., 310 – Անգործ մեղուն ժիր պիծակից լավ է (մարդու աշխատասիրության մասին):

⁵¹ Հմմտ. Մարդն է տեղը զարդարում, ոչ թե տեղը՝ մարդուն լատինական ծագման հոմանշային հաղորդակցական կայուն կապակցությունը արդի հայերենում:

⁵² Անձի արտաքին հատկանիշ է ցույց տալիս՝ Թէպէտ էր մարմնով փոքր, այլ ոչ որքան զՄակեդոնացին Աղեքսանդր (ԱԲ, 121) = Որքան էլ փոքրամարմին էր, Ալեքսանդր Մակեդոնացու չափ չէր, հաղորդակցական կայուն կապակցությունը:

բ) *Դատողություններ անձի հոգեբանական վիճակների մասին*: Օրինակ՝ *Քսրմունք գնան ընդ անդամսն* (ԱԲ, 114) = Մարմնով սարսուռ է անցնում (սաստիկ վախենում է): *Իբրեւ յաղբերակաց հոսէին յաչաց իւրեանց* (Ն. տ., 121) = Նրանց աչքերից արցունքը հոսում էր ինչպես աղբյուրից: *Որպէս ի ծովու ալեկոծիմք* (Ն. տ.) = Ալեկոծվում ենք ինչպես ծովի մեջ: *Համբերութեան մեզ պէտք են* (Ն. տ., 277) = Համբերության կարիք ունենք (Համբերել է պետք): *Սարսափին գայ զօսկերօքն* (Եզն., 177) = Ոսկորները դողում են (սարսափում է): *Տրտում եմ, անմխիթար մինչև ի մահ* (Փարպ., 197) = Չափազանց տխուր՝ անմխիթար եմ: *Կարեւեր եմ մերձ ի մահ* (Ն. տ., 198) = Խիստ տխուր՝ վիրավոր եմ: *Խոցոտեցին զիս ի մահ* (Ն. տ.) = Սաստիկ խոցեցին, ցավ պատճառեցին ինձ:

գ) *Անձի հոգեբնախոսական գործունեություն*: Օրինակ՝ *Շատախօսութեանն հոսանք իբրեւ յաղբերէ դիմեն* (Խոր., 249) = Խոսքերը բխում են ինչպես աղբյուրից (Սաստիկ շատախոսում են): *Բանիք իւրեանց խոցեն որպէս սրով* (ԱԲ, 121) = Իրենց խոսքերով խոցում են ինչպես սրով (խոսքերով սաստիկ ցավ են պատճառում): *Մի՛ խօսիր ընդ մեզ իբրեւ զտղայս* (Ն. տ.) = Մեզ հետ մի՛ խոսիր ինչպես երեխաների հետ (Մի՛ խաբիր մեզ): *Խոստանայ ի վեր քան զմարդ, և քան զմծիխ ազդել ոչ կարէ* (Ն. տ.) = Մարդու ուժերից վեր խոստումներ է տալիս և ոչինչ չի կարողանում անել: *Իբրեւ զանխրայր և զաներկիւղստամբակս խօսիս* (Եղ., 184) – Անխրատ և անվախ անհնազանդների պես ես խոսում (խիստ հանդուգն ես խոսում)⁵³:

3. *Որևէ գործընթացի կամ բնության երևույթի վերաբերող կայուն կապակցություններ*: Հաղորդակցական ԿԿ-ների իմաստային այս խմբում ի հայտ են գալիս թեմատիկ հետևյալ ենթախմբերը.

ա) *Բնության երևույթներ*: Օրինակ՝ *Ժամ ընդ երեկոյ կոյս էր խոնարհեալ* (ԱԲ, 124) = Օրը երեկոյացել էր (Երեկոյան կողմ էր): *Արդ բարիոք է արեգակն եւ գեղեցիկ բնութեամբ* (Եզն., I, 9) = Արդ բարի է արեգակը և բնությով գեղեցիկ:

բ) *Որևէ երևույթի կամ գործընթացի (դրական կամ բացասական) գնահատական*: Օրինակ՝ *Զի՞նչ է յարդ առ ցորենաւ* (ԱԲ, 106) = Հարդն

⁵³ Վերը բերված կապակցությունները պատկերավորության հիման վրա ստեղծված հաղորդակցական կայուն կապակցություններ են: Մասնագիտական գրականության մեջ այդօրինակ կապակցություններն անվանվում են համեմատություն-դարձվածային միավորներ: Խնդրառարկա միավորների մասին հանգամանորեն տե՛ս Խ. Գ. Բաղիկյան, նշվ. աշխ., էջ 103-106, Դարձվածային ոճաբանություն, Ե., 2000, էջ 22, Ա. Դ. Назарян, նշվ. աշխ., էջ 112:

ի՞նչ է ցորենի համեմատությամբ (Կարևորն անկարևորից զատել է պետք): *Քան զաւագ բազմացան* (ն. տ., 120) = Սաստիկ բազմացան): *Ճշմարտութեան մօտ է* (ն. տ., 125) = Ճմարտանման է (Խելամիտ է): *Ջամենայն ծառ պտղովն // ի պտղոյն ճամաչեմք* (ն. տ., 296) = Ամեն ծառ իր պտղով ենք ճանաչում (Ամեն գործում կարևորն արդյունքն է)⁵⁴: *Քանզի անպատում է և ի վեր քան զմիտս և զլեզու մարդկան* (Եզն., 263) = Որովհետև անպատմելի է և խելքից՝ մտքից դուրս (Անհավանական է): *Երկու հակառակք իրերաց միմեանց ծախիչք են, որպէս խաւարի լոյս, եւ ջեր սառնամանեաց* (ն. տ., I, ԺԵ) = Երկու իրար հակառակ բաները միմյանց ոչնչացնողներ են, ինչպես լոյսը վերացնում է խավարը, և ջերմությունը՝ սառնամանիքը): *Ջի որ չար ինչ է, նորա եւ ամենայն ինչ վնասակար է* (ն. տ.) = Որովհետև չարի ամեն ինչն է վնասակար (Չարը միշտ մերժելի է): *Չիք ինչ որ բնութեամբ չար է* (ն. տ.) = Էությամբ չար ոչինչ չկա (Չարը բնածին չէ):

գ) *Որևէ երևույթի կամ գործընթացի ավարտ՝ դրական (կամ բացասական) արդյունքով*: *Օրինակ՝ Վազեցիր զինեւ* (ԱԲ, 97) = Ինձ հանգիստ թողեցին): *Անցին զմտաւ* (ն. տ.) = Մտքիցս թան: *Ելեր զխրատով նորա* (ն. տ.) = Նրա խրատն անտեսեցիր (Չլսեցիր նրան): *Անցոյց զքն զմեղս քո* (ն. տ.) = Մեղքերդ վերցրեց քեզանից (Մաքրագործեց քեզ): *Ջանթակէզ հրոյն ապրեցաւ* (ն. տ., 99) = Այրող-փոթորկող կրակից ազատվեց (Մեծ փորձանքից փրկվեց): *Որպէս ի խաւարէն... զերծեալք ի լոյս՝ խնդային* (Փարպ., 16) = Խավարից դեպի լոյս եկածների պես ուրախացան (Անելանելի վիճակից ազատվեցին): *Անսաստութիւնն եղեւ պատճառ մահուան մարդոցն, իբրեւ յանցաւորի* (Եզն., 47) = Անսաստությունը մարդկանց մահվան պատճառ եղավ ինչպես հանցավորների (Ամեն ինչում չափի զգացողություն է պետք):

4. *Հասարակական կյանքին առնչվող կայուն կապակցություններ*: Այս կարգի հաղորդակցական ԿԿ-ներում առանձնացվում են իմաստային հետևյալ ենթախմբերը.

ա) *Մարդ և հասարակություն փոխհարաբերություն*: *Օրինակ՝ Գովեցէ զքեզ ընկերն՝ և մի քո բերան, օտարն՝ և մի քո շրթունք* (ԱԲ, 419) = Թող քեզ ուրիշները գովեն): *Որչափ մեծ է իշխանութիւն, դժուարին է մարդն* (ն. տ., 435) = Որքան մեծ է իշխանությունը, այնքան դժնի է մարդը: *Փառքին համարժեք փոխվում է և մարդը*: *Մոլիս դու, դե՛ռ ուրեմն հարաւի քեզ* (Բուզ. VI, Ը) = Գովե՛լ ես, ինչ է, թե՞ դիվահարվել):

⁵⁴ Հմմտ. *Պտուղը ծառից հեռու չի ընկնում* (Երեխաները ժառանգում են ծնողների բնավորության գծերը):

բ) *Մարդ և տիեզերք փոխհարաբերություն*: Օրինակ՝ *Միթե մե՞ծ ինչ է մարդ քան զերկինս և զերկիր* (Ագաթ., 182) = Մի՞թե մարդը երկնքից ու երկրից ավելի մեծ է (Մարդը ոչինչ է տիեզերքի համեմատ): *Նա աւասիկ իբրեւ զկառս իմն լծեալ ի չորից երիվարաց զաշխարհս տեսանեմք* (Եզն., 17) = Աշխարհն ահա տեսնում ենք որպես չորս երիվարով լծված մի կառք:

գ) *Ազահությունը և շահամոլությունը մարդկային հարաբերություններում*: Օրինակ՝ *Ոչինչ է խտրի ընդ բազումս կամ ընդ սակաւս* (ԱԲ, 114) = Շատի և քչի միջև զանազանություն չկա (Շատի հետևից ընկնելով՝ կարելի է ոչինչ ձեռք չբերել): *Միայն օգտիցն ևեթ հայիք* (ն. տ., 297 – Միայն օգուտի եք սպասում (Միայն շահն է ձեզ հետաքրքրում): *Բարեկամք մեծաբանց բազումք* (ն. տ., 420) = Հարուստների բարեկամները բազում են (Մարդիկ շահամոլ են // Հարուստներին են պատիվ մատուցում):

Այսպիսով՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին: 1) Հաղորդակցական կայուն կապակցությունները մասամբ կամ ամբողջությամբ վերաիմաստավորված կամ ոչ փոխաբերական նշանակություններ ունեցող պատրաստի վերարտադրելի արտահայտություններ են: 2) Դրանք հանդես են գալիս խոսքային հատուկ պայմաններում որպես խոսքի ամբողջական և ինքնուրույն միավորներ:

3) Դրանց ամենակարևոր առանձնահատկություններն են ստորոգումը, հնչերանգը և մտքի ավարտվածությունը: Էական նշանակություն ունեն նաև եղանակավորման, ժամանակի, դեմքի և թվի, հաստատման – ժխտման քերականական կարգերը: 4) Նախադասություն արժեք ունեցող կայուն կապակցությունները, առածները և ասացվածքները՝ որպես խրատական բնույթի դիպուկ արտահայտություններ, ունեն իմաստային-գործառական աղերսներ: 5) Դրանք ենթարկվում են իմաստային (թեմատիկ) դասակարգման՝ արտահայտելով մարդու և նրան շրջապատող աշխարհին վերաբերող տարբեր հատկանիշներ, հարաբերություններ: 6) Առանձին ուշադրության են արժանի կրոնին՝ քրիստոնեական վարդապետությանն առնչվող հաղորդակցական կայուն կապակցությունները, որոնք արտահայտում են աստծուն և աստվածայինին, այլև վերաբերում են իմաստասիրությանն ու բարոյախոսությանը՝ կարևորելով դրանց դերն ու նշանակությունը իրականության մեջ:

Համառոտագրություններ

ԱԲ -Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:

Ագաթ. – Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:

Առակ. – Առակք Սողոմոնի // Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց, Ե., 1997:

Բուգ. – Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

Եզն. – Եզնկայ Կողբացոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Եղ. – Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Ե., 1957:

Խոր. – Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:

Մարկ. – Աւետարան ըստ Մարկոսի //Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց,, Ե. , 1997:

Փարպ. – Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904:

Л. Н. Аветисян. Семантические группы коммуникативных устойчивых сочетаний в грабаре. Устойчивые сочетания (в дальнейшем: УС) семантически переобразованные (частично или целостно) или непереосмыслённые языковые единицы характеризуются воспроизводимостью. В данной статье по синхронному анализу рассматриваются вопросы семантики коммуникативных УС грабара. Семантически переобразованные коммуникативные УС грабара включают: 1. Унилатеральные УС, 2. идиомы. Коммуникативные УС грабара могут быть распределены по тематическим группам.

L. N. Avetisyan. On the semantic groups of communicative stable compounds in Old Armenian. Stable compounds (therefore SC) are semantically transfiguring (partly or fully) or non-metaphorical language units. They are characterized with ready reproduction. The questions of semantics of communicative SC of old Armenian on synchronic basis are scrutinized in this article. The semantically transfiguring communicative SC of old Armenian are: 1. unilateral SC, 2. idioms. Communicative SC of old Armenian can be divided due to the thematic groups.